ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

№ 2 (146) 18 ՀՈՒՆՎԱՐԻ 2000 Թ.

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1998-Ի ՓԵՏՐՎԱՐԻՑ

Դարն ավարտվեց...

Ջուրը չի խնայում ոչինչ և ոչ ոքի...

ՋՐՀԵՂԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺ ՓՈԹՈՐԻԿ

Ահա այս երեք երևույթները բնորոշեցին երկրորդ հազարամյակի վերջը: Երկրակեղևի ցնցումներն ու հրաբուխները, փոթորիկներն ու ջրհեղեղները դարձել են այնքան սովորական, որ աշխարհի լրատվական ծառայությունները դրանք հաղորդում են որպես սովորական լուրեր:

Իսկ այդ «սովորական» լուրերի հետևում տասնյակների, հազարների խեղված կյանքեր են, նաև՝ ավերված բնակավայրեր, տապալված անտառներ, ցեխաջրերի տակ մնացած դյուրեր, դաշտեր, քաղաքների փողոցներ ու հրապարակներ:

Փոթորիկը տարեվերջին միայն Փարիզում տապալեց 150 հազար ծառ, նրա երկրորդ հարվածը ալեբախություն առաջացրեց միշտ խաղաղ Լազուրե ծովափին: Եղան տասնյակ զոհեր: Վկասվեցին Վերսալն ու Նոթր Դամը:

Արդյոք, այսպիսի կատակլիզմներ նկատի ուներ մեր մոլորակի հնաբնակը, երբ գուշակում էր, թե 2000 թվականին կործանվելու է Երկրագունդը: Համենայնդեպս, կատակլիզմներն, իրոք շատ են, իսկ Երկիր մոլորակը շարունակում է իր բնականոն երթը այդքա՞ն հեռու և այդքա՞ն մոտիկ, այդքա՞ն ծանոթ ու այդքա՞ն հանելուկային տիեզերքում:

Լուսանկարները՝ «ՌՅԵՏԵՐԻ»-ից



Մեքսիկական Պուեբլո քաղաքի Խոլուտա եկեղեցին՝ 1999-ի հունիսի 15-ի երկրաշարժից հետո:

Էթնոմշակութային իրավիճակ. Նոր հիմնախնդիրներ

Խորհրդային Միության փլուզմամբ և նորանկախ պետական կազմավորումների առաջացմամբ, ետխորհրդային երկրներում, ըստ այդմ՝ նաև Հայաստանում, ամենայն ուժգնությամբ նոր իրավիճակ ընթացավ նաև էթնոսների մշակութակենցաղային հետագա զարգացման համար: Հայ էթնոսը ենթակա լինելով ստեղծված նորովի հանրընդհանուր օրինաչափություններին, ունի նաև միայն իրեն բնորոշ յուրահատկություններ, որոնցով էլ որոշվում են հայ արդի ազգագրության հիմնական խնդիրները:

1988-ի Սպիտակի մեծ երկրաշարժի, այնուհետև բռնագաղթերի և սոցիալական-տնտեսական դրության վատացման հետևանքով, հայ էթնոսի համար առհասարակ, Հայաստանի բնակչության համար մասնավորապես, վերջին շուրջ տաս տարվա ընթացքում կատարվեցին պատմաազգագրական մարզերի և տնտեսամշակութային տիպերի որոշակի փոփոխություններ: Հայ ժողովրդի խոշոր զանգվածներ տեղաշարժվեցին իրենց հիմնական բնակավայրերից, մշտական կամ ժամանակավոր բնակության անցնելով մերձավոր և հեռավոր սփյուռքում:

Այսպես, երկրաշարժի արհավիրքին ենթարկված ՀՀ բնատարածքի մեկ երրորդ մասը Շիրակի և Լոռու պատմաազգագրական մարդկային մեծաթիվ կորուստներից բացի ենթարկվեց, եթե կարելի է ասել, միկրոմշակութային որոշակի այլափոխությունների, որոնք դրսևորվեցին թե՛ նյութական, թե՛ հոգևոր ոլորտներում: Դա առաջին իսկ հայացքից աչքի է զարնում հատկապես բնակավայրերի վերակմնգնման գործընթացում: Այն, ինչ տնաշինության ասպարեզում արվել է այլազգի, մասնավորապես ռուս, ուկրաինացի և այլոց երախտիքի հույժ արժանի գործնական աջակցությամբ (ցավոք, ընդհատված ԽՍՀՄ փլուզումից հետո), բնակավայրերին տվել է բոլորովին այլ տեսք՝ թե կառուցապատման, թե հատակագծման առումով:

Այդուհանդերձ, երկրաշարժից ավելի քան տաս տարի հետո էլ գյուղական շատ բնակավայրեր, նաև մարզային կենտրոններ Կումայրին (Գյումրի—Լենինական), Վանաձորը (Կիրովական), նաև Ստեփանավան ու Ախուրյան քաղաքները լիովին վերակազմված չեն, ուստի բնակիչների մեծ մասն ստիպված ապրում է կամ վթարային շենքերում և կամ ժամանակավոր տնակներում, որոնք վաղուց արդեն քայքայվել են և դարձել բնակության ոչ պիտանի:

Հարկ է նշել, որ անցյալ դարի վերջերից և հատկապես ընթացիկ հարյուրամյակում վերը նշված մարզերում, այս էլ երկրորդ արմատական վերափոխությունն է, որ տեղի է ունենում բնակավայրա-բնակարանային համալիրում: Դարից 1930—1950-ական թթ. բնակարանի գլխատան համալիրի տիպը (Շիրակում՝ հազարաշեն տարբերակը, Լոռիում՝ սողոմաքաշը), ինչպես և ամբողջ Հայաստանում վերափոխվեց յուրաքանչյուրի տեղական պայմաններին հույժ հարմար մեկուկես-երկհարկանի երկլանջատանիքանի քաղաքատիպ տան, որը կատարվեց բնականոն կերպով՝ տեղական շինանյութով և ավանդույթով, միևնույն երկրաշարժին հաջորդած բնակարանաշինությունն օտարաժուտ է ամեն ինչով, որին, սակայն, բնակիչները ստիպված ընտելանում են, այն ինչ-որ չափով հարմարեցնելով իրենց ճաշակին, սովորույթներին ու պահանջմունքներին:

Երկրաշարժին գրեթե անմիջապես հաջորդած ազգամիջյան ընդհարումների հետևվանքով տեղի ունեցած բռնագաղթերի ալիքն արդեն իր հորձանուտի մեջ առավ ոչ միայն բուն Հայաստանը, այլև Արցախն ու հարակից հայաբնակ վայրերը: Դրան նույնպես անմիջաբար հաջորդած երկրի սոցիալ-տնտեսական վիճակի խիստ վատթարացումը ավելի ուժեղացրեց ներգաղթ-արտագաղթ գործընթացը, որը, մասնավորապես արտագաղթը, առավել տևական բնույթ ունեցավ:

Չնայած իր գոյության հազարամյակների ընթացքում հայ էթնոսը ենթարկվել է բազում արմատական ցնցումների, այդուհանդերձ, ընդհուպ մինչև Հայոց Մեծ եղեռնը (1915—1922 թթ.) պահպանվել էին Հայաստանի հիմնական պատմազգագրական մարզերը (շուրջ 12)՝ արևելահայ և արևմտահայ հատվածներով, իրենց ենթամարզերով հանդերձ, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանի պատմազգագրական մարզերը՝ Լեռնային և հովտային (միջերկրածովափնյա) գոտիներով:

Այդ ամենից 20-րդ դ. 20-ական թթ. մնացել (փրկվել) էր պատմական Հայաստանի 1/10-ը. կազմող Խորհրդային Հայաստանը և Խորհրդային Միության հարակից հանրապետությունների կազմի մեջ մտցված հայաբնակ մարզերը, որոնք (վերջիններս) կամ հայաթափվել էին (սպիտակ ջարդի միջոցով՝ Նախիջևանի ԻԽՍՀ-ն) կամ էլ նույն վըտանգի տակ էին, որն զգալի մասով իրականացվեց արդեն ԽՍՀՄ փլուզման ընթացքում, բուն միջոցներով (բուն Ադրբեջանի զգալիորեն հայաբնակ մարզերը՝ Ուտիքն ու Արցախի հյուսիսի շրջանը, և քաղաքները՝ Սումգայիթը, Բաքուն, Գանձակը և մյուսները):

Այս ամենի արդյունքում խաթարվեցին բուն Հայաստանի և ամբողջ Հայաստանում վերափոխվեց յուրաքանչյուրի տեղական պայմաններին հույժ հարմար մեկուկես-երկհարկանի երկլանջատանիքանի քաղաքատիպ տան, որը կատարվեց բնականոն կերպով՝ տեղական շինանյութով և ավանդույթով, միևնույն երկրաշարժին հաջորդած բնակարանաշինությունն օտարաժուտ է ամեն ինչով, որին, սակայն, բնակիչները ստիպված ընտելանում են, այն ինչ-որ չափով հարմարեցնելով իրենց ճաշակին, սովորույթներին ու պահանջմունքներին:

Երկրաշարժին գրեթե անմիջապես հաջորդած ազգամիջյան ընդհարումների հետևվանքով տեղի ունեցած բռնագաղթերի ալիքն արդեն իր հորձանուտի մեջ առավ ոչ միայն բուն Հայաստանը, այլև Արցախն ու հարակից հայաբնակ վայրերը: Դրան նույնպես անմիջաբար հաջորդած երկրի սոցիալ-տնտեսական վիճակի խիստ վատթարացումը ավելի ուժեղացրեց ներգաղթ-արտագաղթ գործընթացը, որը, մասնավորապես արտագաղթը, առավել տևական բնույթ ունեցավ:

Չնայած իր գոյության հազարամյակների ընթացքում հայ էթնոսը ենթարկվել է բազում արմատական ցնցումների, այդուհանդերձ, ընդհուպ մինչև Հայոց Մեծ եղեռնը (1915—1922 թթ.) պահպանվել էին Հայաստանի հիմնական պատմազգագրական մարզերը (շուրջ 12)՝ արևելահայ և արևմտահայ հատվածներով, իրենց ենթամարզերով հանդերձ, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանի պատմազգագրական մարզերը՝ Լեռնային և հովտային (միջերկրածովափնյա) գոտիներով:

Այդ ամենից 20-րդ դ. 20-ական թթ. մնացել (փրկվել) էր պատմական Հայաստանի 1/10-ը. կազմող Խորհրդային Հայաստանը և Խորհրդային Միության հարակից հանրապետությունների կազմի մեջ մտցված հայաբնակ մարզերը, որոնք (վերջիններս) կամ հայաթափվել էին (սպիտակ ջարդի միջոցով՝ Նախիջևանի ԻԽՍՀ-ն) կամ էլ նույն վըտանգի տակ էին, որն զգալի մասով իրականացվեց արդեն ԽՍՀՄ փլուզման ընթացքում, բուն միջոցներով (բուն Ադրբեջանի զգալիորեն հայաբնակ մարզերը՝ Ուտիքն ու Արցախի հյուսիսի շրջանը, և քաղաքները՝ Սումգայիթը, Բաքուն, Գանձակը և մյուսները):

Այս ամենի արդյունքում խաթարվեցին բուն Հայաստանի և ամբողջ Հայաստանում վերափոխվեց յուրաքանչյուրի տեղական պայմաններին հույժ հարմար մեկուկես-երկհարկանի երկլանջատանիքանի քաղաքատիպ տան, որը կատարվեց բնականոն կերպով՝ տեղական շինանյութով և ավանդույթով, միևնույն երկրաշարժին հաջորդած բնակարանաշինությունն օտարաժուտ է ամեն ինչով, որին, սակայն, բնակիչները ստիպված ընտելանում են, այն ինչ-որ չափով հարմարեցնելով իրենց ճաշակին, սովորույթներին ու պահանջմունքներին:

Երկրաշարժին գրեթե անմիջապես հաջորդած ազգամիջյան ընդհարումների հետևվանքով տեղի ունեցած բռնագաղթերի ալիքն արդեն իր հորձանուտի մեջ առավ ոչ միայն բուն Հայաստանը, այլև Արցախն ու հարակից հայաբնակ վայրերը: Դրան նույնպես անմիջաբար հաջորդած երկրի սոցիալ-տնտեսական վիճակի խիստ վատթարացումը ավելի ուժեղացրեց ներգաղթ-արտագաղթ գործընթացը, որը, մասնավորապես արտագաղթը, առավել տևական բնույթ ունեցավ:

Չնայած իր գոյության հազարամյակների ընթացքում հայ էթնոսը ենթարկվել է բազում արմատական ցնցումների, այդուհանդերձ, ընդհուպ մինչև Հայոց Մեծ եղեռնը (1915—1922 թթ.) պահպանվել էին Հայաստանի հիմնական պատմազգագրական մարզերը (շուրջ 12)՝ արևելահայ և արևմտահայ հատվածներով, իրենց ենթամարզերով հանդերձ, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանի պատմազգագրական մարզերը՝ Լեռնային և հովտային (միջերկրածովափնյա) գոտիներով:

Այդ ամենից 20-րդ դ. 20-ական թթ. մնացել (փրկվել) էր պատմական Հայաստանի 1/10-ը. կազմող Խորհրդային Հայաստանը և Խորհրդային Միության հարակից հանրապետությունների կազմի մեջ մտցված հայաբնակ մարզերը, որոնք (վերջիններս) կամ հայաթափվել էին (սպիտակ ջարդի միջոցով՝ Նախիջևանի ԻԽՍՀ-ն) կամ էլ նույն վըտանգի տակ էին, որն զգալի մասով իրականացվեց արդեն ԽՍՀՄ փլուզման ընթացքում, բուն միջոցներով (բուն Ադրբեջանի զգալիորեն հայաբնակ մարզերը՝ Ուտիքն ու Արցախի հյուսիսի շրջանը, և քաղաքները՝ Սումգայիթը, Բաքուն, Գանձակը և մյուսները):

Այս ամենի արդյունքում խաթարվեցին բուն Հայաստանի

ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Հայերենագիտական միջազգային գիտաժողովը, որը թվով վեցերորդն էր, այս անգամ գումարվեց Փարիզում: Ֆրանսիայի մայրաքաղաքը հյուրընկալել էր թվով 75 հազգի և օտարազգի հայերենագետների: Այն կազմակերպել էր Ֆրանսիայի ազգային ակադեմիայի արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտը, որի հայագիտական ամբիոնը ղեկավարում է լեզվաբանության դոկտոր Անահիտ Տոնապետյանը:

Գիտաժողովի երկու լիագումար և 12 հյուղային նիստերում քննարկվեցին լեզուների տիպաբանության, համեմատական լեզվաբանության, ազգագրության, աղբյուրագիտության բազմաթիվ հարցեր, որոնք վերաբերում էին հայերենի զարգացման տարբեր փուլերին՝ ընդգրկելով նրանց բոլոր մակարդակները: Հատուկ ուշադրության էին արժանացել հայերենի արևելահայ և արմտահայ գրական տարբերակները, բարբառները և բառարանները: Նիստերը տեղի էին ունենում Ֆրանսիայի ազգային ակադեմիայում, Սորբոնի համալսարանում և Ֆրանսիայի ազգային ակադեմիայի արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտում:

Գիտաժողովի կազմը ներկայացուցչական էր. մասնակցում էին աշխարհի 13 երկրների գիտնականներ, Հայաստանը ներկայացնում էին գիտամանկավարժական տարբեր օջախներ՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտը, ԳԱԱ ազգագրության և ճնագիտության ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը, Մատենադարանը, Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտը:

Գիտաժողովում զեկուցումներով հանդես եկան օտարազգի անվանի հայագետներ Ժ. Մահեն, Հ. Հոլցը, Ջ. Գրեպինը, Ա. Օրենգոն, Բ. Ուտիեն, Վ. Ստրոմպերը, Ռ. Օտեմիելը, Բ. Վոքսը, Ց. Վայտենբերգը, Ջ. Քլակսոնը, Ն. Կոզինցևան: Տարբեր մասնաճյուղերում զեկուցումներ կարդացին Հայաստանի պատվիրակության բոլոր անդամները՝ Լ. Հովսեփյանը, Վ. Համբարձումյանը, Խ. Բադիկյանը, Ս. Տիդյանը, Ռ. Ոսոուտյանը, Ռ. Թոխմախյանը, Ռ. Շալուցը, Գ. Գևորգյանը և ուրիշներ: Փորձառու գիտնականների կողքին ելույթ ունեցան նաև երիտասարդ լեզվաբաններ Ա. Աբրահամյանը, Ա. Մուշեղյանը, Ա. Բախշյանը, Ա. Գևորգյանը:

Վաստակաշատ գիտնական, հայտնի իրանագետ Ա. Փերիխանյանի ներկայությունը առանձնակի ջերմություն հաղորդեց գիտաժողովի մթնոլորտին: Նրան պատվոգիր շնորհելու կապակցությամբ Ֆրանսիայի ակադեմիան կազմակերպել էր ընդունելություն, որին մասնակցում էր նաև Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Պ. Նալբանդյանը:

Գիտաժողովը ցույց տվեց, որ նախորդից հետո (1995 թ. Կանադա) տարբեր երկրներում հայերենագիտության բնագավառում կատարվել են հիմնարար ուսումնասիրություններ, մշակվել լեզվաբանական նյութի մշակման նորագույն մեթոդներ: Ուրախալին այն էր, որ վաստակաշատ գիտնականների կողքին իրենց ծանրակշիռ խոսքն ունեն երիտասարդ մասնագետները, իսկ դա նշանակում է, որ այսօր հետաքրքրությունը դեպի հայերենագիտությունը ավելանում է, որն ինքնին պարտավորեցնող է հայ լեզվաբանների համար: Արձանագրվեց նաև այն փաստը, որ չնայած հայ լեզվաբանության բնագավառում վերջին տարիների ունեցած նվաճումներին, դեռևս կան հիմնահարցեր ու խնդիրներ, որոնք պահանջում են համալիր ուսումնասիրություններ՝ պայմանավորված տարբեր երկրների գիտնականների համատեղ աշխատանքով: Խիստ այժմեական է առանձին բառարանների, գրական հուշարձանների, հիմնարար ուսումնասիրությունների համակարգչային (քոմփյութերային) ներկայացումը, որ մատչելի լինի աշխարհի շահագրգիռ հայերենագետների համար: Այս հարցում Հայաստանը, ցավոք, ատհիճանարար զիջում է իր առաջնային տեղը: Հիմնական պատճառը տեխնիկական վերազինման բացակայությունն է, որ խոչընդոտում է ծավալուն տեքստերի գրանցման և ուսումնասիրության համար: Այստեղ նորից հնչեց հայերենի գրաշարների համակարգչային (քոմփյութերային) հատատված հիմնարկի բացակայությունը, որը արգելակում է տարբեր երկրների լեզվաբանների համատեղ աշխատանքը:

Հուսով ենք, որ թե՛ Հայաստանի Հանրապետության և թե՛ ՀՀ ԳԱԱ ղեկավարները ուշադրություն կդարձնեն այս հարցի վրա, քանի որ խնդիրը միայն լեզվաբանական չէ: Այն ունի տնտեսական մեծ նշանակություն, որի հաջող վճռման դեպքում կշահի և՛ տնտեսությունը, և՛ գիտությունը:

Ս. ՏԻՏՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Ռ. ՈՍՈՒՏՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

«ԲԻՈԷԿՈՄԵԴ»-Ը՝ ԳՈՐԾՈՂ ԿԱՌՈՒՅՑ

«Բիոէկոմեդ» հասարակական կազմակերպությունն իր առջև խնդիր է դրել կանխել կենսաբանության, բժշկության և բնապահպանության բնագավառների մասնագետների արտահոսքը Հայաստանից: Այդ նպատակի իրագործման համար կազմակերպությունը մշակում և իրականացնում է ծրագրեր, որոնք խրախուսելու են նրանց ստեղծագործական նախաձեռնությունները, պաշտպանելու մասնագիտական իրավունքները, բարելավելու սոցիալ-տնտեսական վիճակը:

Կազմակերպությանը մտահոգում են նաև երիտասարդ մասնագետների առջև շուկայական հարաբերությունների ներմուծմամբ ծառացած պրոբլեմները, գիտության համար այս ծանր պայմաններում նրանց մասնագիտական ունակությունների զարգացման խնդիրները:

Ահա հենց այս նպատակով «Բիոէկոմեդ» կազմակերպությունը մայիսի 24-ից մինչև նոյեմբերի 22-ը կազմակերպեց և իրականացրեց «Մոլեկուլային և բջջային կենսաբանության ժամանակակից մեթոդները» անունով ուսուցման ծրագիր: Ուսուցմանը մասնակցում էին ակադեմիական ինստիտուտների և Երևանի պետական համալսարանի ավելի քան 45 երիտասարդ գիտաշխատողներ: Սեմինարներին ՀՀ ԳԱԱ և արտասահմանյան երկրների 17 փորձառու գիտնականներ ունկնդիրներին ներկայացրին մասնագիտական ժամանակակից մեթոդների հիմունքները: Ուսուցման ծրագիրը անց էր կացվում գիտությունների ազգային ակադեմիայի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի և Միջազգային գիտա-ուսումնական կենտրոնի տեսչության ներքո:

Դեկտեմբերի 15-ին կայացավ «Մոլեկուլային և բջջային կենսաբանության ժամանակակից մեթոդները» ուսուցման ծրագրի ավարտական արարողությունը: 11 լավագույն մասնակիցներ ստացան ավարտական վկայականներ:

Կարծում ենք, որ «Բիոէկոմեդ» հասարակական կազմակերպությունը (նախագահ՝ կենսաբանական գիտությունների դոկտոր Աննա Բոյաջյան) հաճնձ է առել ազնիվ, շնորհակալ ու անշահախնդիր առաքելություն և, ուրեմն, արտանձ հաջողություններ մաղթենք կազմակերպության հետագա գործունեությանը:

301—2001

1994 թ. Գյումրիում երկրագիտական թանգարանի երիտասարդ գիտնականների ջանքերով առաջին անգամ գումարվեց Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հանրապետական գիտաժողով, որին մասնակցեցին հարյուրից ավելի հայագետներ և հյուրեր: Ընթերցված 52 զեկուցումներում ամփոփված էին պատմական գավառի հնագիտական բնույթի նորագույն հետազոտությունների արդյունքները: Անդրադարձ գիտաժողովին ամրագրեց նաև Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված գիտաժողովները ավանդական դարձնելու և դրանք երկու տարին մեկ Գյումրիում կայացնելու որոշում:

1996 թ. կայացած երկրորդ գիտաժողովն առանձնահատկանշական էր: 75 զեկուցումներով գիտական նյութերի տասնյակ ներկայացվեցին 1994—1996 թթ. ընթացքում Շիրակի հին և նոր պատմության, հնագիտության, ազգագրության, ճարտարապետության և արվեստի, էթնոսոցիոլոգիայի և հնագիտության այլ բնագավառներում կատարված ուսումնասիրությունները: Այս գիտաժողովները, բացահայտելով մարզում հայագիտական հետազոտությունների արդի մակարդակը, տեղի գիտական ներուժի հնարավորությունները, նաև նպաստեցին 1997 թ. աշնանը Գյումրիում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի մասնաճյուղի՝ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ստեղծմանը, որն էլ ստանձնեց հաջորդ գիտաժողովների կազմակերպման պատասխանատվությունը:

ՇՊՄԺ հանրապետական երրորդ գիտաժողովը գումարվեց 1998-ին՝ ավերիչ երկրաշարժի 10-րդ տարում և հանրագումարեց հետաղեղնյան տասնամյակի ընթացքում Շիրակի հոգևոր և նյութական մշակույթի մասունքների ուսումնասիրությունների արդյունքները:

Հանրապետական չորրորդ գիտաժողովը (200 թ. սեպտեմբեր) կոչված կլինի ի մի բերելու Շիրակին վերաբերող վերջին տարիների հայագիտական հետազոտությունները արդյունքները մեր երկրում, ինչպես նաև հետակեցնելու դրանց հիմնական ուղղությունները նոր՝ XXI դարաշրջին և նպատակային ծրագրի ստեղծմանը:

ԱՄԲԻՈՆԸ 50 ՏԱՐԵԿԱՆ Է

Երևանի հարտարապետաշինարարական ինստիտուտի մեծ դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված «Ջերմազոդամատակարարում և օդափոխություն» ամբիոնի 50-ամյա հոբելյանին:

Տոնակատարությանը իրենց մասնակցությունն էին բերել ամբիոնի տարբեր տարիների հարյուրավոր շրջանավարտներ, ուսանողներ, դասախոսներ: Ամբիոնը պատրաստել է 1700 հարտարագիտական կադրեր, որոնք աշխատում են տարբեր բնագավառներում: Անցած տարիներին պրոֆեսորադասախոսական կազմի ջանքերով ուսումնական գործընթացը ձեռք բերեց նոր որակ, ստեղծվեցին և կահավորվեցին նոր լաբորատորիաներ: Հատկապես մեծ աշխատանք տարվեց ուսումնամեթոդական ձեռնարկների ստեղծման գործում: Մեծ քանի տասնյակ գիտահետազոտական աշխատանքները, ուժեղացան գիտական և ուսումնական կապերը արտասահմանյան առաջատար ամբիոնների (Մոսկվա, Մինսկ) և գիտարտադրական հաստատությունների հետ: Իրականացվեցին համատեղ գիտական ուսումնասիրություններ և արդյունքները ներդրվեցին ոչ միայն ուսումնական գործընթացում, այլև տասնյակ գործնական կիրառություն:

Այս տարվա հունիս ամսին Բուդապեշտում կայացած սեմինար-խորհրդակցության ժամանակ, «Ջերմազոդամատակարարում և օդափոխություն» ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Զոհրաբ Մելիքյանը, ի թիվս այլ հարցերի, համագործակցության բանակցություններ է վարել ԱՄՆ-ի ներկայացուցիչների հետ:

Նախատեսվում է տեխնիկական և նյութական աջակցություն ցույց տալ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից մշակված նախագծերի և բիզնես պլանների իրականացման համար: Փարիզում համաձայնություն կայացվեց ամբիոնը «Բնժներական կրթության եվրոպական ասոցիացիայի» մեջ ընդգրկելու մասին: Ամբիոնի հանդուրձյունների գրավականը նրա պրոֆեսորադասախոսական կազմի նվիրված աշխատանքն է: Այսօր կոլեկտիվը հավատով է նայում ապագային և վստահ է, որ ամբիոնում աճող երիտասարդ գիտնականների նոր սերունդը հանդուրձյամբ կշարունակի ձեռք բերված լավագույն ավանդույթները:

Ստեփան ՊԱՊՈՅԱՆ
էներգետիկ ինժեներների միջազգային ասոցիացիայի անդամ, էներգետիկ [illegible] «Լուսաւոր» թերթի գլխավոր խմբագիր

ՀՐԱՇԱՄԱՆՈՒԿՆԵՐԻՑ ՄԵԿԸ

(ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԼԵՎՈՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

1924 թվականը արժանահիշատակ է նրանով, որ այդ տարի աշխարհի եկած մի խումբ հայորդի հրաշամանուկներ, որոնց վիճակվեց դառնալ հայոց պատմության, արվեստի ու գիտատարապետության առաջամարտիկներ: Այդ խումբը գլխավորում է հանճարեղ, վաղամեռիկ Պարույր Սևակը, ապա՝ Լևոն Հախվերդյանը: Նույն թվականին էր ծնվել ճարտարապետների մի զգալի խումբ, որում՝ վաստակավոր ճարտարապետներ Ֆելիքս Դարբինյանն ու Էդվարդ Պասկյանը (Նորիջ Արմենակ Տեր-Աբրահամյանի որդին): Փոքր ուշացումով խումբը լրացրին Գրիգոր Խանջյանը, Ջիվ Թորոսյանը, երկուսն էլ տալանդաշատ ճարտարապետ:

Սակայն խոսքս լայնաբեղուն Լևոն Հախվերդյանի մասին է՝ մեծ գիտնականի ու արվեստաբանի, պայծառ մարդու: Որ ասպարեզում էլ որ նա հանդես է եկել՝ թատերագիտության, գրականության, թումանյանագիտության կամ լեզվաբանության, բոլորում էլ կատարյալ է, խորամուխ, թեև դժվարությամբ հանձնառ, բայց գնահատվեց նաև արվեստի ինստիտուտի տնօրենի պաշտոնում: Այդ հիմնարկը ինձ համար սրտամոտ է, և ոչ միայն նրա համար, որ ճարտարապետության պատմագան ու տեսաբան եմ, այլև այն կապակցությամբ, որ որոշ տարիներ (1951—1953 թթ.), գլխավորել եմ հայ արվեստագետների անդամների կերտուման այդ դարաշրջը, որն այն տարիներին տակավին սեկտորի կարգավիճակ ուներ:

Հոբելյարի հետ մոտիկից աորնչվել եմ, երբ երկուսս անդամ էինք Հովհաննես Թումանյանի թանգարանի գիտական խորհրդի: Նրան հանձնարարվեց կազմել ցուցադրության վերափոխման ծրագիրը: Ինձ հայտնի էր, որ նա փայլուն թումանյանագետ է, ամենայն հայոց բանաստեղծի մասին բազում աշխատություններ, այդ թվում «Թումանյանի աշխարհը» գրքի հեղինակ, բայց որ նա այդպիսի ժանրամասնությամբ տեղյակ է Մեծ լոռեցու կյանքի դրվագներին, ուղղակի բոլորիս հիացրեց: Ուստի Լևոն Հախվերդյանի կազմած ծրագիրը լիովին հավանության արժանացավ:

Ափսոս, որ թանգարանի տնօրեն, բանաստեղծի դուստր Թամարի մահվան պատճառով ծրագիրը չիրականացվեց: Ավելին, թանգարանի նոր տնօրենները նույնիսկ ոճի մի մասը ավերեցին: Բանաստեղծի սուրբ օջախը դադարեց հետաքրքիր միջոցառումների հավաքատեղի լինելուց:

Հավակնություն չունեմ ներկա ոճդվածով հանդես գալ որպես ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի գիտական վաստակի վերլուծող, քանզի դրանց մասնագետը չեմ, պարզապես անդրադառնում եմ որպես ընթերցող: Չեմ կարող իմ հիացումս չհայտնել նրա բեղուն գրչի հրաշագործություններից մեկի՝ «Պարույրը»՝ գրքի մասին, որը ես կասեի հեղինակի գլուխգործոցն է: Դրանում նա իր մտերիմ ընկերոջ կենսագրության «միայն իրեն հայտնի» մանրամասների, գրական միջավայրին վերաբերող շատ հետաքրքիր տեղեկությունների ֆոնի վրա գրականագիտական հմտությամբ ու շատ գեղեցիկ հայերենով մեկիկ-մեկիկ վերլուծել է մեծատաղանդ Պարույր Սևակի «Նորից քեզ հետ», «Մարդը ափի մեջ», «Անլռելի զանգակատուն», «Ծոցից լույս» ժողովածուները, անդրադարձել դրանց ստեղծման պատմությանն ու առաջացման որոշ հրապճակներին, նաև «Սայաթ-Նովա» հիմնարար մենագրությանը, որի համար Պարույր Սևակին, ըստ արժանվույն, շնորհվեց բանասիրության դոկտորի գիտական աստիճան:

Կարդալով «Պարույրը», հրապարակվեցի «Սայաթ-Նովա» մենագրության ընթերցմամբ ու իմ առջև Պարույր Սևակը հառնեց որպես խորախորհուրդ մի գրականագետ, մեծ աշուղի ըստեղծագործության հմուտ մեկնաբան: Վերընթերցելով Լևոն Հախվերդյանի «Պարույրը», հայերենի դասեր առա, նաև համոզվեցի, որ հեղինակի գրիչը համահունչ է Պարույր Սևակի մեծությանը:

Որպես թատերագետ Լևոն Հախվերդյանին ծանոթ էի տարբեր ներկայացումների մասին թերթերում տպագրված նրա վերլուծական ոճդվածներից: Գիտեի նրա մտերմության մասին հայրենակցիս՝ մեծատաղանդ բեմադրիչ Վարդան Ադեմյանի հետ, որին ընծայել է իր «Տաղանդ և բնավորություն» և «Կլասիկան և մեր օրերը» գրքերը: Դրանցում նա մի քանի գործերի ընթերցող: Չեմ կարող իմ հիացումս չհայտնել նրա մեկնաբանությունների համար: Ադեմյանի փորձերին, նա ականատես է եղել ներկայացումներ «Լյառնատանջ» նրա ջանքերին ու քարքը վարպետությանը: Միաձգամայն իրավացի էր իմ եղբայրը՝ ժողովրդական դերասան Արծրուն Հարությունյանը, որ ասում էր, թե այդ գըրքերից յուրաքանչյուրը Վարդան Ադեմյանի բարձրարվեստ քանդակներ են:

Վերջերս լույս տեսավ Լևոն Հախվերդյանի կազմած «Մեծերը ամենամեծի մասին» գիրքը, որում հմուտ թումանյանագետը ներկայացրել է «Վերնատան» անդամներ Ղազարոս Աղայանի, Դերենիկ Դեմիրճյանի, Ավետիք Իսահակյանի, Լևոն Շանթի և Նիկոլ Աղբալյանի գնահատականները «Վերնատան» գլխավորի՝ Հովհաննես Թումանյանի մասին:

Հոբելյարի հետ մոտիկից աորնչվելու ևս մի առիթը՝ 1988-ին Իտալիայում տեղի ունեցած հայ մշակույթին ևվիրված գիտաժողովին միասին մասնակցելն էր: Դրա վերջում, ակադեմիկոս Լևոն Հախվերդյանը, որպես Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի տնօրեն, ստորագրեց Միլանի Հայ մշակույթի ուսումնասիրման և վավերացման կենտրոնի ու արվեստի ինստիտուտի միջև գիտական համագործակցության համաձայնագիրը:

Մշտապես հիացած եմ Լևոն Հախվերդյանով: Տարբեր է ոչ միայն նրա գրելաոճը, այլև՝ բանավոր խոսքը: Նրա ելույթներին սպասում են, հաճույքով ունկնդրում:

Մի խոսքով, իմ սիրելի Լևոն Հախվերդյանը, ինչպես ժողովուրդն է ասում՝ «ոմանով հոտով մարդ է», ավելացնենք նաև՝ «ուտող, խմող»: Հաճելի է նրա հետ սեղան նստել, ունկնդրել նրա կենսախինդ ու համով-հոտով զրույցները: Իր կենսասեր նկարագրով նա «չոր ու ցամաք» գիտնական չէ:

Так держать,— ասում է ռուսը: Մաղթենք հոբելյարին, որ ժամանակի իմ երկարակեցությունը, շատ տարիներ շարունակի իր լայնաբեղուն գիտական գործունեությունը, անպակաս մնա գիտական շրջանակներից, նույնպիսի ինքնատիպությամբ շարունակի զարդարել իր շրջապատը:

Վարազդատ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ակադեմիկոս

Արժանավոր մարդու հոբելյան

Գիտական, գրական ու թատերական աշխարհում Լևոն ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻՆ ճանաչում են որպես մեծավաստակ գիտնականի, բազմահմուտ գրականագետի ու թատերագետի, հմուտ թարգմանչի, փայլուն արվեստաբանի ու հայերենագետի, երևելի թումանյանագետի:

Այս ամենով հանդերձ, Լևոն ՀԱԽՎԵՐԴՅԱՆԸ ժամանակակիցներիս համար բացառիկ անհատականություն է: Իր իմացությամբ ու գործելակերպով, պահվածքով ու կեցվածքով նա հիշեցնում է մեր երևելի հներին: Ըստ իս, նրա մեջ ներհյուսված են հայոց հինավուրց իմաստության, ողջախոհության, ազնվամտության ցոլքերը: Նրա աշխարհընկալման մեջ նշմարվում են հայոց բանականության հեռանոսական հնադարի ոսկու և քրիստոնեության 17 հարյուրամյակների ադամանդի շողարձակումները: Այդ առումով Լևոն ՀԱԽՎԵՐԴՅԱՆԸ եզակի հայաստանագետ է, մեծ մտավորական, հայրենասիրության, արդարամտության, անաչառության, ազնվության չափանիշ:

Թող օրինակ լինի նրա ծնունդը: Իսկ հոբելյանի նշումը պիտի իմաստավորվի մի նշանաբանով՝ եկեք աչքի լույսի պես պահենք ու պահպանենք մեր Լևոն ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻՆ:

Հայկ ՆԱԶԱՐՅԱՆ
Հայաստանի գրողների միության անդամ

ՀՈՒԲԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում տեղի ունեցավ մեծարման ցերեկույթ՝ ևվիրված ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի ծննդյան 75 և գիտական գործունեության 50-ամյակին:

Ինստիտուտի գիտական կոլեկտիվի հետ միասին ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի հոբելյանը նշելու էին եկել Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի, գրողների միության, մշակույթի հայկական հիմնադրամի, գրական մամուլի ներկայացուցիչները:

Ներկայացը համառոտ խոսքով բացեց ինստիտուտի փոխտնօրեն Վլ. Կիրակոսյանը: Իրենց ելույթներով մեծաքարոզիտնականի վաստակը արժևորեցին Հայաստանի գրողների միության նախագահ Հր. Մաթևոսյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Վլ. Բարխուդարյանը, համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան Վ. Գաբրիելյանը, մանկավարժական ինստիտուտի հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ա. Դոլուխանյանը, համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Խ. Ամալյանը, մշակույթի հիմնադրամի նախագահ Ա. Ավագյանը, «Գարուն» հանդեսի խմբագիր Լ. Ադամյանը, ինստիտուտի՝ նորագույն գրականության պատմություն ուսումնասիրող խմբի դեկավար Ա. Եղիազարյանը, գլխավոր գիտաշխատող Ա. Զաքարյանը և ուրիշներ:

Գրիգոր ՀԱԿՈԲՅԱՆ

Հրապարակում ենք գիտնականի 75-ամյակի առթիվ ՀՀ ԳԱԱ նախագահության ողջույնը:

Մեծարգո Սերգեյ Ներսեսի:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը և հումանիտար գիտությունների բաժանմունքը ողջունում են Ձեզ՝ վաստակաշատ գիտնականիդ, Ձեր ծննդյան 75-ամյակի առթիվ:

Մեծ է Ձեր ներդրումը հայ գրականության պատմության ուսումնասիրության գործում: Արդեն հինուն տարի Դուք ղեկավարում եք հայ նոր գրականության պատմության ամենաբազմազան խնդիրների հետազոտությամբ, որոնց արդյունքներն ամփոփված են Ձեր բազմաթիվ մենագրություններում ու գրքերում՝ «Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ», «Րաֆֆի», «Հակակաղ ռոմանտիզմ», «Մուրացան», «Գեղարվեստական գրականության պատմականությունը», «Հայ գաղափարաբանություն» և այլն: Ձեր այս և այլ աշխատությունները մեծ նպաստ են բերել հայ ոչ միայն գրականագիտական, այլև առհասարակ հասարակագիտական մտքի զարգացմանը:

Արդեն չորս տասնամյակ է, ինչ Դուք ղեկավարում եք Մաշտոց Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժինը, ապա՝ հայ վեպի պատմության խումբը: Նշանակալից չափով Ձեր գիտակազմակերպական աշխատանքի արդյունք էր հայ նոր գրականության պատմության հինգհատորյակի ստեղծումը, որը վերջին տասնամյակների հայ գրականագիտական մտքի նվաճումներից է: Այդ մեծածավալ կոլեկտիվ մենագրության հպարտ Դուք Ձեր գործընկերների հետ միասին ստացաք Հայաստանի պետական մրցանակը, որ միանգամայն արժանի գնահատական էր Ձեր տքնաջան աշխատանքի:

Ձեր ղեկավարությամբ թեկնածուական և դոկտորական դիսերտացիաներ են պաշտպանել բազմաթիվ գիտնականներ, որոնք այսօր աշխատում են տարբեր գիտական և բուհական հիմնարկներում:

Անցած տասնամյակների ընթացքում Դուք եղել եք ամենաակտիվ գործող քննադատներից մեկը, որը սրտացավ, շահագրգռված վերաբերմունք է ունեցել այսօրվա հայ գրականության խնդիրների նկատմամբ, և այսօր էլ գրողները հաշվի են նստում Ձեր կարծիքների ու գնահատականների հետ:

Գիտական հատարակայնությունը բարձր է գնահատել Ձեր վաստակը: Մենք ուրախ ենք, որ այսօր Դուք, իբրև Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամ, մեզ հետ միասին մասնակցում եք հայոց նոր պետականության մշակույթի կառուցման գործին: Վստահ ենք, որ դեռ շատ անելիքներ ունեք այդ ճանապարհին:

Ճանկանում ենք Ձեզ քաջառողջություն, երկար կյանք, գիտական նոր ձեռքբերումներ:

Ֆաղեյ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս
Գևորգ ԲՐՈՒՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, ակադեմիկոս

Բնական ցեոլիտներ

Ցեոլիտները ալկալիների և հողալկալիների հիդրատացված ալյումինասիլիկատներ են, որոնք կարող են դիտարկվել որպես դաշտային շպաթների ջրային համարժեքներ: Ցեոլիտների բյուրեղային ցանցը, ի տարբերություն դաշտային շպաթների, պարունակում է ալկալիների և հողալկալիների կատիոններով և ջրի մոլեկուլներով լցված ծակոտիներ և համեմատաբար մեծ ներքին խոռոչներ (պատուհաններ):

Ցեոլիտների բյուրեղային ցանցի յուրահատուկ կառուցվածքով են պայմանավորված դրանց մի շարք օգտակար հատկություններ, որոնց շնորհիվ էլ որոշվում են ցեոլիտների կիրառության ոլորտները: Ցեոլիտների ամենաեզակի հատկություններից մեկը կլանման բարձր ընտրականությունն է և զանազան նյութերի իոնների ու մոլեկուլների տարաջատման ունակությունը:

Ցեոլիտների կողմից նյութերի տարաջատման և կլանման մեծ ունակությունը հայտնի է դեռևս վաղ ժամանակներից: Սակայն բնական ցեոլիտները արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ կիրառություն չէին գտնում, որովհետև մինչև մեր դարի 60-ական թվականները դրանց արդյունաբերական կոտակներ հայտնի չէին: Տնտեսապես զարգացած երկրներում ցեոլիտային տորբոմնտների արդյունաբերական պահանջները բավարարվում էին դրանց արհեստական սինթեզման ճանապարհով: Վերջինիս գործնական կիրառության սկիզբը կապված էր բարձրորակ ռեակտիվ վառելիքի և օրգանապես քայքայվող լվացող նյութերի ըստացման հետ:

Ադսորբցիոն և մոլեկուլար-մաղային հատկությունների վրա է հիմնված ցեոլիտների կիրառությունը գազային և հավթաքիմիական արդյունաբերության մեջ՝ գազերի մաքրման և չորացման նպատակով, օդից թթվածնի ու ազոտի անջատման համար, որոնք օգտագործվում են ամոնիակի և ամոնիակային սիլիտրայի արտադրության մեջ, վակուումային տեխնիկայում՝ գազերի աննշան քանակները որսալու եղանակով խորը վակուում ստեղծելու նպատակով, սառեցման տեխնիկայում՝ սառեցնող նյութերի խորը չորացման համար, որոշ նյութերի սինթեզման ժամանակ՝ բենզոլի և այլ բուրավետ ածխաջրածինների մաքրման համար, սինթեզման հումքը և քիմիական արդյունաբերության թափոնները ծծմբային հնոտատային խառնուրդներից մաքրելու համար, ատոմային արդյունաբերության թափոններից ռադիոակտիվ ստրոնցիումը և ցեզիումը կլանելու համար և այլն: Ցեոլիտների կատալիտիկ հատկություններն օգտագործվում են նավթի կրեկինգի ժամանակ: Կատիոնափոխանակման հատկությունների վրա է հիմնված ցեոլիտների կիրառությունը ջրերի փափկացման համար: Ցեոլիտները կիրառվում են լաբորատոր փորձերում և գումալուսանկարչության մեջ: Բնական ցեոլիտները լայն կիրառություն են գտել գյուղատնտեսության մեջ, որտեղ նրանք բարձրացնում են հողի բերքատվությունը, բարելավում վերջինիս կատիոնափոխանակման հատկությունը, նպաստում խոնավության պահպանմանը և պարարտանյութերը պաշտպանում լվացումից: Ընտանի կենդանիներին և թռչուններին ցեոլիտներով կերակրելիս՝ մեծանում է աճող մատղաշի քաշը, կենդանիները ազատվում են քորից, աճում է կաթնատվությունը, բարձրանում է մսի որակը և այլն:

Այսպիսով, ցեոլիտները լայն կիրառության և բազմազան ոլորտի հումք են՝ թե՛ արդյունաբերության, թե՛ գյուղատնտեսության, և թե՛ շրջակա միջավայրի պահպանության մեջ: Ընդորում, արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղի և գյուղատնտեսության կարիքների համար պահանջվում են որոշակի հատկությունների առկայություն, մի շարք դեպքերում նույնիսկ օգտակար հատկություններից մի քանիսի առկայությունը՝ միաժամանակ:

Գործնական մեծ արժեք են ներկայացնում բարձր կալցքարային (սիլիկահողային) ցեոլիտները. մորդենիտը, կլինոպտիլոլիտը, շաբազիտը, էրիոնիտը, ֆերլերիտոտը, որոնք օժտված են ագրեսիվ միջավայրի, իոնացնող ճառագայթման և բարձր ջերմատիճանի ազդեցության նկատմամբ կայունության հատկանիշներով: Նման ցեոլիտները կարող են կիրառվել միջուկային տեխնոլոգիայում և այլ այնպիսի ճյուղերում, որտեղ իոնատի, ադսորբենտի կամ կատալիզատորի կայունության նկատմամբ ներկայացվում են բարձր պահանջներ:

Վաթսունական թվականներին արտասահմանյան մի շարք երկրներում՝ ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Հունգարիայում, Բուլղարիայում, Կուբայում, Հարավսլավիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Աֆրիկյան մի շարք երկրներում, իսկ յոթանասունական թվականներին նաև նախկին ԽՍՀՄ-ում հայտնաբերվել են բնական ցեոլիտների հանքավայրեր, որտեղ ցեոլիտների արդյունաբերությունը կազմում է 60-ից մինչև 90—95 տոկոս:

1972 թ. հեղինակի կողմից բնական ցեոլիտների խոշորագույն հանքավայր է հայտնաբերվել նաև Հայաստանում՝ Նոյեմբերյանի շրջանի տարածքում: Ցեոլիտների հանքատեսակներից արդյունաբերական նշանակություն ունեն կլինոպտիլոլիտը և մորդենիտը, որոնք առաջացնում են ինչպես համարյա միահանքանյութային կուտակներ՝ ցեոլիտների 70—95 տոկոս պարունակությամբ, այնպես էլ մոնտմորիլլոնիտ պարունակող խառը կուտակներ՝ ցեոլիտների ու մոնտմորիլլոնիտի տարբեր քանակային հարաբերությամբ (30—50 տոկոս):

Այս հանքավայրում հայտնաբերվել են նաև առանձին շերտեր ու տեղամասեր, որոնք ներկայացված են միատարր բենթոնիտային հանքանյութով: Հանքանյութերի ռեսուրսները, ըստ իս կազմում են. ցեոլիտային հանքաքարերինը՝ 520 մլն տ, բենթոնիտային հանքաքարերինը՝ 300 մլն տ և ցեոլիտ-բենթոնիտային խառը հանքաքարերինը՝ 500—520 մլն տ:

Որոնողա-գնահատողական աշխատանքների արդյունքով հաստատվել է, որ Նոյեմբերյանի հանքավայրի ցեոլիտները պիտանի են արդյունաբերության և գյուղատնտեսության բազմաթիվ ու բազմազան ճյուղերի համար: Այսպես, օրինակ, դրանք պիտանի են.

1) կատալիզատորներ և դրանց կրողներ պատրաստելու համար,

2) որպես ադսորբենտներ նավթամթերքների մաքրման համար,

3) ցեզիումի, ռուբիդիումի, լիթիումի, կալիումի և այլնի ընտրովի անջատման համար,

4) որպես հողի կառուցվածքը բարելավող և բերքատվությունը բարձրացնող նյութ, որը միևնույն ժամանակ հողից կլանում է ռադիոակտիվ ստրոնցիումը և ցեզիումը,

5) կաբրամիդային խտանյութի (անասնակերի) պատրաստման համար,

6) որպես ադսորբենտ բնական այրվող գազերի չորացման համար,

7) արդյունաբերությունից հեռացող գազերից թթու տարրերը որսալու համար,

8) սինթետիկ մաքրող նյութեր պատրաստելու համար,

10) այլ տիպի ցեոլիտներ (ֆոժազիտ, շաբազիտ, ճատրիումական մորդենիտ) սինթեզելու համար,

11) որպես լցոն ռետինի ու թղթի արդյունաբերության համար,

12) հողաջրերի մաքրման ու խմելու համար պիտանի դարձնելու համար ,

13) ատոմական էլեկտրակայաններից արտանետվող ջրերից ռադիոակտիվ թափոնները որսալու համար:

Առանձնահատուկ կարևորություն ունեն բնական ցեոլիտները ատոմային էլեկտրակայաններից արտանետվող ջրերից ռադիոակտիվ թափոնների որսման գործում:

Կլինոպտիլոլիտի և քլորիդային լուծույթների միջև փոխանակվող իոնների տեղաբաշխման բնույթի ուսումնասիրությամբ հատատվել է, որ Նոյեմբերյանի հանքավայրի կլինոպտիլոլիտը ալկալային մետաղների՝ ցեզիումի, ռուբիդիումի, կալիումի խոշոր կատիոնների նկատմամբ, նատրիումի և հատկապես լիթիումի համեմատ, դերևսորում է կտրուկ ընտրունակություն:

Նոյեմբերյանի մլինոպտիլոլիտի իոնափոխանակման հատկությունների ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են տալիս այդ ցեոլիտները դիտել որպես բարձր արդյունավետության բնական կլանիչներ, որոնց օգնությամբ կարելի է տարբեր կազմության լուծույթներից ցեզիումը, ռուբիդիումը, ստրոնցիումը, արծաթը և կապարը ընտրողաբար կորզել և տարաջատել միմյանցից: Հետևապես, կլինոպտիլոլիտի հանքավայրի յուրացումը և այդ ցեոլիտի ներդրումը արտադրության մեջ ժամանակակից արդյունաբերության հրատապ լուծում պահանջող խնդիրներից մեկն է: Այս էժանագին, բայց միևնույն ժամանակ իր հատկություններով շատ արժեքավոր եզակի հումքի օգտագործումը թույլ կտա լուծել ժողովրդատնտեսական մի շարք կարևորագույն խնդիրներ:

Այս առումով Նոյեմբերյանի ցեոլիտների շահագործումը, կապված Մեծամորի ռազկական ատոմակայանի վերագործարկման հետ, ձեռք է բերում հրատապության առաջին աստիճանի կարգ: Հիշենք ոչ վաղ անցյալում Չեռնոբիլում կատարված աղետը, որի հետևանքով շրջապատում տարածված ռադիոակտիվ տարրերի թափոնները, շատ մեծ ուշացումով, մասնակիորեն հավաքվեցին Վրաստանի Չեզվի հանքավայրից բերված մաքրացված ցեոլիտների (կլինոպտիլոլիտի) օգնությամբ:

Այս առումով շատ հետաքրքրական է «Տրուդ» թերթում, դեռևս 1991 թ. (18 հոկտեմբերի), Յու. Տոկարենկոյի տպագրած հոդվածը, որտեղ հեղինակը նշում է, որ «Չեռնոբիլյան վթարից հետո՝ կասեցի վերջին Չեռնոբիլյան վթարին նմանատիպ վթար տեղի է ունեցել ԱՄՆ-ում, սակայն ամերիկացիները, առաջացած պրոբլեմները, բնական ցեոլիտների օգնությամբ, հաղթահարել են ընդամենը երկու տարվա ընթացքում»:

Նույն տեղում նշված է, որ **Ն. Պետունկինի հաշվարկներով բնական ցեոլիտները շրջակա միջավայրի մաքրման ու պահպանման նպատակներով օգտագործելու դեպքում տնտեսական արդյունքը կարող է կազմել 15 միավոր (ռուբլի, դոլար, դրամ) մեկ միավոր ծախսի դիմաց:**

Ըստ ճապոնացի հետազոտողների տվյալների, պարարտանյութերի հետ հողին խառնված կլինոպտիլոլիտը զգալիորեն բարձրացնում է գյուղատնտեսական մշակարույսերի բերքատվությունը: Շրջակա միջավայրի պահպանության խնդիրների հետ կապված կարևոր նշանակություն է ձեռք բերում բնական ցեոլիտները հողին ավելացնելը՝ բույսերը գրունտային ջրերի և նստվածքների մեջ պարունակող վնասակար խառնուրդներից պաշտպանելու նպատակով:

Բնական ցեոլիտների իոնափոխանակման հատկությունների վերաբերյալ ստացված տվյալները ցույց են տալիս, որ հողին կլինոպտիլոլիտ ավելացնելիս, մի շարք բավական թունավոր մետաղների ակտիվությունը կտրուկ նվազում է: Փորձերը ցույց են տվել, որ ռադիոակտիվ իզոտոպներով վարակված հողին Նոյեմբերյանի կլինոպտիլոլիտ խառնելիս կանաչ զանգվածում ռադիոակտիվ ստրոնցիումի և ցեզիումի պարունակությունները զգալիորեն նվազում են: Ամենայն հավանականությամբ, կլինոպտիլոլիտի կողմից կլանվելու հաշվին գյուղատնտեսական բույսերի մեջ զգալիորեն կնվազեն նաև այնպիսի թունավոր մետաղների պարունակությունները, ինչպիսիք են սնդիկը, կապարը, ցինկը, կադմիումը և այլն:

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ հողին կլինոպտիլոլիտ ավելացնելը աճի տարբեր փուլերում զգալի ազդեցություն է ունենում բույսերի զարգացման և բերքատվության վրա: Հաստատվել է, որ կանաչ զանգվածի ծավալը և բերքատվության աճը կախված է ինչպես կլինոպտիլոլիտի կատիոնային ձևվից, այնպես էլ հողին ավելացվող քանակից:

Արտասահմանյան երկրներում կարբամիդ կոչվող խտանյութի պատրաստման համար լայնորեն կիրառվում են ճատրիումական բարձրորակ՝ ուռչող բենթոնիտներ: Շնորհիվայում այդ նպատակների համար բենթոնիտներին զուգընթաց, նույնքան լայնորեն, կիրառվում են նաև բնական ցեոլիտներ՝ կլինոպտիլոլիտ:

Գյուղատնտեսության և սննդարդյունաբերության մեջ, ինչպես նաև խմելու ջուրը վնասակար խառնուրդներից մաքրելու նպատակով բնական ցեոլիտների՝ կլինոպտիլոլիտի, կիրառման հեռանկարները մեծապես կախված են դրանց թունահարույց հատկություններից: Այդ պատճառով էլ առաջին հերթին որոշվեցին Նոյեմբերյանի բնական ցեոլիտների այդ հատկությունները:

Ցեոլիտների թունահարույց հատկանիշները բնորոշվում են նրանց մեջ առկա թունավոր տարրերի՝ ֆտորի, մկնդեղի, կապարի, սնդիկի և կադմիումի, պարունակություններով: Նշված տարրերի պարունակությունների թույլատրելի սահմանը, Ն. Զելիշչևի և մյուսների (1987) տվյալներով, հետևյալն է. ֆտորինը՝ 0,15 տոկոս, մկնդեղինը՝ 0,01 տոկոս, սնդիկինը՝ 0,0005 տոկոս, կապարինը՝ 0,002 տոկոս, կադմիումինը՝ 0,05 տոկոս:

Այդ տարրերի իրական պարունակությունները Նոյեմբերյանի հանքավայրի ցեոլիտների մեջ շատ ավելի ցածր են, քան դրանց թույլատրելի սահմաններն են:

Նոյեմբերյանի հանքավայրի ցեոլիտները և ցեոլիտ-բենթոնիտները կարբամիդային խտանյութի արտադրության մեջ կիրառելու հնարավորությունների ուսումնասիրությունները տվել է միանգամայն բավարար արդյունքներ:

Փորձարկման հեղինակները վերլուծելով ցեոլիտներով և ցեոլիտ-բենթոնիտներով կարբամիդի համասեռ խառնուրդներ ստանալու արդյունքները հանգել են միանշանակ եզրակացության. «Նոյեմբերյանի ցեոլիտները և ցեոլիտ-բենթոնիտները կարող են բարձր արդյունավետությամբ օգտագործվել կարբամիդի խտանյութ պատրաստելու նպատակով»:

Նախկին ԽՍՀՄ-ի տարբեր հանրապետություններում, տարբեր հեղինակների կողմից կատարված հետազոտություններով հաստատվել է, որ բնական ցեոլիտները անասնապահության և թռչնաբուծության մեջ կիրառելիս (հավերին, ճտերին, խոզերին ու խոշոր եղջերավոր կենդանիներին ցեոլիտներով պատրաստված կերով կերակրելիս) ստացվում է զգալի տնտեսական արդյունք: Այսպես, **Ա. Ի. Բուրովի, Ա. Ս. Միխայլովի և մյուսների (1989) կատարած հաշվարկներով, 1 տոննա ցեոլիտից ստացած տընտեսական արդյունքը կազմում է. հների աճեցման համար՝ 880 նախկին ԽՍՀՄ ռուբլի (1985 թվականի կուրսով), ճվատու հավերին կերակրելիս՝ 9700 ձ., խոշոր եղջերավոր կենդանիներին կերակրելիս՝ 480 ձ., խոզերին կերակրելիս՝ 280 ձ.:**

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

Գիտաժողով

ԱՆՎԱՆ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԼԻՐՇԱՏԱԿԻՆ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում հրավիրված գիտաժողովը ևվիրված էր պատմական գիտությունների դոկտոր, ականավոր թուրքագետ Հրաչեն Սահակյանի ծննդյան 70-ամյակին:

Նիստը բացեց ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը: Արժանին մատուցելով Հրաչեն Սահակյանի գիտական ծաղրակշիռ վաստակին, նշվեց, որ նա հայ արևելագետների առաջին այն սերնդի ներկայացուցիչներից էր, որոնք իրենց ուսերի վրա տարան Հայաստանում առաջին արևելագիտական կենտրոնի ստեղծման ստրատեգիական ուղղությունը: Ավարտելով Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, 1958 թվականին նա եկավ ակադեմիայի արևելագիտական սեկտոր, ապացավ լաբորանտ-կրտսեր և ավագ գիտաշխատողի ուղիով՝ ձևավորվելով որպես հմուտ, իր ուրույն ճանապարհն ու ասելիքը ունեցող գիտնական:

Նրա առաջին գիտական հետազոտությունները ևվիրված էին խորհրդա(ռուս)-թուրքական հարաբերություններին, մութ ու վտանգավոր մի բնագավառ, որն ի պատիվ Հրաչեն Սահակյանի, նա փայլուն կերպով իրագործեց այդ խընդիրը:

Հրաչեն Սահակյանի գիտական հետաքրքրությունների մյուս կարևոր ուղղությունը Թրաճս-թուրքական հարաբերությունների 20-ական թվականների պատմությունն էր, և, վերջապես հայ-թուրքական հարաբերություններն ու նրա միջուկը հանդիսացող ցեղասպանությունը, որը և դարձավ Հրաչեն Սահակյանի գիտական ուսումնասիրությունների գլխավոր և հիմնական ոլորտը: Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի հետ նա համաձեղնակ էր նախադեպը չունեցող մի այնպիսի երևույթի, ինչպես «Հայերի ցեղասպանությունը Թուրքիայում», փաստաթղթերի ժողովածուի հրատարակությունը:

«Հրաչեն Սահակյան թուրքագետ-պատմաբանը և քաղաքացին» թեմայով զեկուցեց ինստիտուտի ավագ գիտաշխատող Ռեմ Ղազանչյանը:

Հրաչեն Սահակյանի 70-ամյակին ևվիրված հոբելյանական նիստը վերածվեց հուշ-երեկոյի, քանի որ բոլորի մեջ դեռ թարմ էր ցավը ականավոր գիտնականի, քաղաքացու, հրաշալի ընկերոջ և մարդու կորստյան առթիվ: Ջերմ հուշեր պատմեց իր երկար տարիների մտերիմ ընկերոջ մասին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Հրաչեա Ավետիսյանը:

Պրոֆեսոր Պարույր Մուրադյանի խոսքը ներկայացրեց Հրաչեն Սահակյան մարդու ինքնատիպ, առանձնացող, անբամբաս բնավորությունը, իր մասնագիտության նկատմամբ անչափ շահագրգիռ գիտնականին, մարդկային մեծ բարեմասնություններով օժտված ընկերոջն ու անհատականությանը:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ կամ Ռորից ադրբեջանցիների երեսպաշտության մասին

Ադրբեջանական Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաների Մոսկվայում ունեցած քաղցր-մեղցր ու շողոմ ելույթները, որոնցում երդվում, հավաստիացնում են Ռուսաստանի և ռուս ժողովրդի հանդեպ իրենց տածած անզուսպ սիրո և բարեկամական ջերմ զգացմունքների մասին, ըստ էության, նպատակ ունեն շղարշել ի սկզբանե թշնամական քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ: Հենց այդպիսի հակառուսական քաղաքականություն էր վարվում նաև այն ժամանակ, երբ պրեզիդենտական բազկաթոռին նստած էր թուրքական մոլի ազգայնական Էլչիբեյը: Այս գիծը շարունակվում է նաև այսօր, խորհրդային պարտության վերապրուկ Ալիևի կողմից, որը իր ներկա ազգանվնասչական կյանքն ու ծրագրերն ամուր կապել է Անկարայի պանթյուրքիստների հետ:

Ըստ բնութագրական է, որ և՛ Էլչիբեյի, և՛ Ալիևի ժամանակ ադրբեջանական պրեզիդենտի դիվանագիտական խորհրդատուն է ոմն Վաֆա Գուլիզադե, որը առանձնաճատուկ «սեր» է տածում Ռուսաստանի նկատմամբ: Եվ որքան էլ սա փորձի թաքցնել իր ռուսատյացությունը, այն ակներև է ու հայտնի, զի ոչ մոսկովյան շրջանակներում նա այդ ատելությունը նույնիսկ տարիներով է: 1995-ին, ելույթ ունենալով, իրենց կողմերի «քաղաքական հանձնաժողովում», սույն պարոնը Ռուսաստանին հորջորջեց «Ադրբեջանի ոխերիմ թշնամի, նրան վերագրելով «կայսերական ծավալապաշտական ձգտումներ» և կոչ արեց ԱՄՆ-ին՝ Ռուսաստանի ոտքը կտրել Անդրկովկասից («Մոսկովսկի պրավդա», 9.08. 95 թ.): Սա Գուլիզադեի այս ոգով արված բազմաթիվ հայտարարություններից մեկն է միայն: Այս կերպ նա ոչ միայն արտահայտում է իր տեսերի (դեռ խորհրդային տարիներից նա աշխատում է ԿՀՎ-ի համար) գաղտնի ընկերությունները, այլև ինքն է ներկայի Բաքվի կառավարողներին հուշում, թե ինչ պետք է անել արտաքին քաղաքականության ասպարեզում: Եվ ամենևին էլ զարմանալի չէ, որ հենց նրան են հանձնարարել բոլոր մակարդակներում բարձրացնել Աչչերոնում կամ Ադրբեջանի որևէ մասում թուրքական (իմա՝ ՆԱՏՕ) ռազմական բազայի տեղադրման հարցը, Թուրքիայի հետ միասին օգտագործել ԽՍՀՄ Անդրկովկասյան զինվորական օկրուգից Ադրբեջանի տարածքում մնացած ռազմական օբյեկտները («Նեզավիսիմայա գազետա», 10.02.99 թ.): Այդ նա է ամենուր թմբկահարում, «թե ՆԱՏՕ-ն Ադրբեջանին պետք է ռուս-հայկական դաշինքին դիմակայելու համար» («Էքսպերտ» № 3, 25 հունվարի 1999 թ.): Սակայն գաղտնիք չէ, որ այդ գաղափարի գլխավոր և թերևս միակ նպատակը Անդրկովկաս-Կասպիական տարածությունից Ռուսաստանին դուրս մղելն է՝ ապագայում թիրախ ունենալով Պարսկաստանը, Հյուսիսային Կովկասը, Կենտրոնական Ասիան և որիշ տարածքներ, այսինքն, ուր թուրքեր կան:

ՆԱՏՕ-ի բազայի վերաբերյալ բանակցությունները արդեն մտել են վճռական փուլ: Մարտի 18-ին ադրբեջանական մեջլիսը վերացրեց հանրապետության տարածքում արտասահմանյան ռազմական բազաներ տեղադրելու արգելքը, իսկ մի քանի օր անց, Հ. Ալիևը Բաքվում ընդունեց ԱՄՆ-ի խիստ ներկայացուցչական ռազմական պատվիրակությանը և հավաստիացրեց, որ ադրբեջանական կառավարությունը բոլոր հնարավորություններ կօգտագործի խորացնելու ռազմական համագործակցությունը ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ («Սեվոդնյա», 25.08.99, «Նեզավիսիմայա գազետա» 27.03.99):

Նշանակում է, որ ՆԱՏՕ-ն Ռուսաստանի վրա է քշում ոչ միայն Արևմուտքից, այլ բոլոր կողմերից: Եվրոպայում ՆԱՏՕ-ն արդեն հայտ է ներկայացրել համաշխարհային ժանդարմի դեր ստանձնելու իր հավակնությունը՝ կոտտանքների ենթարկելով համառող Հարավսլավիային: Սա սկսել է մեզ՝ մոտենալ նաև ԱՊՀ-ի հարավային սահմաններից, Ասիայում: Այստեղ առաջին ջութակի դերը խաղում է Թուրքիան, բնականաբար, նույն այդ ամերիկա-նատոյական դիրիժորների ղեկավարությամբ: Իսկ սրան ձայնակցողի դերը հանձնարարել են Բաքվին, որը լիովին կողմնորոշված է դեպի իր թուրք եղբայրները և նրանց ամերիկյան հովանավորները՝ օգուտներ ակնկալելով դրանից:

...1993 թվականին «թուրքիզմի» և «իսլամիզմի» ճողի վրա խելագարված Էլչիբեյին տապալեց Հեյդար Ալիևը: Տապալեց այն Հուսեյնովի օգնությամբ, որին, որպես շնորհակալություն, բանտ նետեցրեց և կազմակերպեց շոու-դատավարություն՝ ցույց տալու ռուսական «հետքը»:

Ալիևը ԽՄԿԿ քաղբյուրոյի ամենահավատարիմ և ճիվրված անդամներից մեկն էր, որը անսահման երանությամբ հրապարակավ լպստում էր մեր թանկագին Լեոնիդ Իլյիչի մոութը: Այսօր Շևարդնաձեի հետ միասին նա առանց ամոթի զգացումի ուզում է ցույց տալ, թե իբր ինքը «միշտ» համարյա այլախոհ է եղել և ընդդիմադիր՝ խորհրդային իշխանությանը: Այսօր, ամեն հերթական հանդիպման ժամանակ, Ալիևը ճվաղում և սիրատուր ժպտում ու գրկախառնվում է մեր ներկայիս պրեզիդենտի հետ: Սակայն նա չի էլ փորձում փոխել իր նախորդի հակառուսական քաղաքականությունը: Ավելին, նա շարունակում է Էլչիբեյի թուրքիզացիայի քաղաքականությունը՝ հռչակելով «երկու պետություն մեկ ազգ» կարգախոսը: Ամեն պատեհ առիթով նա ընդգծում է, որ Թուրքիան Ադրբեջանի համար հանդիսանում է երկրորդ (իսկ գուցե և առաջին) «հայրենիքը»: Նա չի հոգնում կրկնել Թուրքիայի նկատմամբ իր ժողովրդի սիրո, Աթաթուրքի և թուրքական մյուս ղեկավարների նկատմամբ իր անսահման ակնածանքի մասին («Հանրինսկի ռաբոչի», 15.05.97): Նա ձգտում է ամրացնել ռազմաքաղաքական դաշինքը նատոյական Թուրքիայի հետ, գինական օգնություն ստանալ նրանից և զարգացնել ռազմական համագործակցությունը ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ:

Եվ ահա Էլչիբեյյան գաղափարախոսության խոսափող Լեյլա Յունուսովան, հայտնվելով ընդդիմության շարքերում, «Օբշչայա գազետա» թերթին տված հարցազրույցում հայտարարեց, որ «Ադրբեջանում չկան ռուսական կողմնորոշում ունեցող քաղաքական ուժեր» և «չկան կուսակցություններ, որոնք կողմ են Ռուսաստանի հետ կապերի սերտացմանը»: Միևնույն ժամանակ, կան Թուրքիայի հետ դաշինքի ջատագովներ: Ադրբեջանում թուրքերին հավատարիմ են արյունակից եղբայրներ»:

Դժբախտաբար, այս ճշմարտությունները մեր իշխանության վերին ոլորտներում սևուշադրության մատնվածից: Այլապես գուցե թե գլխի ընկնեին, որ դարաբաղյան հակամարտության կարգավորման դիվանագիտական միջնորդների այն ժամանակվա ադրբեջանամետ դիրքորոշումը պարզապես դավաճանական էր ոչ միայն մեր դաշնակցի նկատմամբ՝ (հանձին Ղարաբաղի և Հայաստանի)՝ այլև սեփական ռուսական շահերին Անդրկովկասում: Դա, ըստ էության, թուրքամետ, ամերիկամետ դիրքորոշում էր: Չէ՞ որ մեր դիվանագետները բացահայտ պոչ էին խաղացնում ամերիկացիների առջև և դեռ ֆրանսիացիներին էլ ներքաշեցին այդ անփառունակ խաղի մեջ: Իսկ վերջիններս էլ, չհասկանալով, թե շահադիտական մղումներով (միայն թե, պարդոն, ի՞նչ շահերի) մեզ հետ միասին, ամերիկացիների թելադրանքով, փորձեցին ճզմել դարաբաղցիներին, նրանց և մյուս հայերին ենթարկել տալ օտարի կամքին, որի արդյունքում Անդրկովկասից Ռուսաստանի պոչը հաստատ կխուզեին, նրանից հետո էլ՝ Ֆրանսիայինը:

Հակառուսական գաղափարական արշավը Բաքվում և ամբողջ աշխարհում մեր ադրբեջանցի «բարեկամների» կողմից տարվում է հակահայկականին զուգընթաց: Նպատակը՝ միջազգային հասարակայնության խղճահարությունը հարուցել «խեղճ» ադրբեջանցիների նկատմամբ, որոնց ճընշում են փիս ռուսներն ու սարսափելի հայերը: Միաժամանակ, Ադրբեջանի թուրքական իշխանավորները չեն թաքցնում իրենց զավթողական ու տարածքային նկրտումները:

«Այսօրվա Հայաստանի տարածքի մեծ մասը անցյալում պատկանել է Ադրբեջանին,— հայտարարեց Հ. Ալիևը Ստամբուլում» («Հանրինսկի ռաբոչի», մայիս, 97 թ.):

Իր պետի օրինակին հետեվելով, Վ. Գուլիզադեն «ճը2տեց».

«...Ադրբեջանական խանությունների տարածքները իրենց մեջ ընդգրկում էին այժմյան Հայաստանի տարածքի 90 տոկոսը» (Բաքու, «Պանորամա» թերթ, 31.05.97 թ.):

1998 թվականի հունվարի 14-ին, խոսելով Լենինի և Աթաթուրքի կողմից Ադրբեջանին ընծայված հայկական Նախիջևանի «սխամականորեն» Ադրբեջանին պատկանելու մասին, Ալիևը հայտարարեց, որ «Ադրբեջանի պատմական հողերը, ուր հիմա տեղավորված է Հայաստանի Հանրապետությունը», «պետք է նույնպես վերադարձվեն»: Դա միանշանակ է և, եթե մենք չենք կարող հասնել դրան, ապա այդ կանենք սերունդները («Հանրինսկի ռաբոչի», 23.01.98 թ.):

Իսկ 1998 թվականի նոյեմբերին Բաքվում կայացած խառնածողովում ադրբեջանական պրեզիդենտը որոշակիացրեց տարածքային իրենց հավակնությունները. «Տերիտորիան, որ հիմա կոչվում է Հայաստան, Արևմտյան Ադրբեջանի հողերի վրա: Նրբանց գիշատիչ հայացքները տարածվում են մինչև Կազան և Ալթայ:

Իրենց տարածքային հավակնությունները հիմնավորելու համար, նրանք կեղծում ու վիրաբանում են պատմությունը: Խորհրդային ձևվազգի ադրբեջանցի թեկնածուներն ու դոկտորները այդ գործում վիթխարի փորձ ունեն կուտակված, նրանք դիակապտություն են անում հայերի, լեզգիների, ավարների, քրդերի, թալիշների և մյուս ժողովուրդների պատմության անդաստանում և ձեռքի հետ նրանց դարձնում թուրքեր: Նրանց «թեթև» ձեռքով պարսից մեծ բանաստեղծ Նիզամին դարձավ «ադրբեջանցի», թեև այն ժամանակ, երբ պոետն ապրում էր, նրա հայրենիքում անգամ չէին լսել ադրբեջան բառը:

...Ներկայիս Ադրբեջանի պրեզիդենտը, նախարարները, կառավարական պաշտոնյաները պարզապես ստում են, երբ փորձում են գործը ներկայացնել այնպես, թե իբր 200 տարի առաջ Ռուսաստանը ոմն «Ադրբեջանի» գրկել է անկախությունից: Այնինչ, գալով Շիրվանյան, Մութանյան հարթությունները, Արաքսի և Քուռի հովիտն ու Թալիշյան լեռները (որոնք պատմականորեն և ստույգ եղել են Մեծ Հայաստանի մի մասը), ռուսները չգտան և չհանդիպեցին գոնե մեկին, որ իրեն «ադրբեջանցի» անվաներ: Լեզգիների հանդիպեցին, հայերի հանդիպեցին, պարսիկների և անգամ կովկասյան թաթարների հանդիպեցին, բայց ամա, չգիտես ինչու, ոչ մի տեսակ ադրբեջանցու չհանդիպեցին: Այնպես, որ, պարոնայք, Ռուսաստանը չի խլել (չեղած բանը ինչպե՞ս խլես) Ադրբեջանի անկախությունը ոչ 200 տարի առաջ և ոչ էլ ավելի ուշ: Եվ ինչպե՞ս կարող էր, երբ «Ադրբեջան» պետություն պանթյուրքիստները ձևեցին ու սարքեցին 1918-ին: Իսկ ամա, 1991-ին, Մոսկվան, դժբախտաբար, առանց խորը մտածելու, ճանաչեց Ադրբեջանի անկախությունը և այն էլ սահմաններով ու տարածքներով, որոնք 1921 թվականին ռուս բոլշևիկները ապօրինաբար ճվիրել էին բաբվեցի թուրքերին: Այս մասին Բաքուն մոռանում է, բայց իզուր:

Մեղադրում են նրանք մեզ նաև նրանում, որ մենք այսօր համարյա խանգարում ենք իրենց անկախության կայացմանը, քանի որ չենք թողնում խժռել անգամ Ղարաբաղը, և պնդում ենք առնականտման քաղաքական կարգավորման մեր դիրքորոշումը՝ Բաքվի և Սմփեհանակերտի միջև ուղիղ բանակցությունների միջոցով: Ինչպես դա ընդունված է ամենուր: Եվ այդ խնդրի հետ ի՞նչ կապ ունի Ադրբեջանի անկախությունը: Այս պարագայում նրանց անհանգստացնում է ուրիշ բան՝ մենք խոչընդոտում ենք ագերա-թուրքական զավթողական նկրտումներին:

Նրանք ճնշում են գործադրում Մոսկվայի վրա, ահաբեկում, կեղծում ու ստում, միայն թե ստիպեն մեզ հրաժարվենք մեր ազգային շահերից, որոնք Անդրկովկասում առաջին հերթին ապահովում է հենց դիմադրող ու պայքարող Ղարաբաղի գոյությամբ, Հայաստանի հետ մեր դաշինքով և Անդրկովկասում ռուսական զինված ուժերի ծանրակշիռ ներկայությամբ:

Ադրբեջանական պաշտոնական անհիք իրենց սուտը տարածում են ամբողջ աշխարհում, ճառերով և զեկուցումներով հանդես գալիս ՆԱՏՕական մայրաքաղաքներում և մուսուլմանական երկրներում, կոչեր ծեծելով՝ աղեկտուր օգնություն աղերսում, կեղծարարությամբ զբաղվում միջազգային կազմակերպություններում ու հանձնաժողովներում՝ առանց հոգնելու համառ ու հետևողական զրպարտանքի մուր թափելով Հայաստանի և Ռուսաստանի հասցեին:

Ադրբեջանական իշխանավորները, թուրքադրբեջանական պրոպագանդայի բոլոր միջոցները մոլորակի բոլոր անկյուններում տարածում են այն կարծիքը, թե ղարաբաղցիները Ադրբեջանից բռնագրավել են տարածքի 20 տոկոսը: Մինչդեռ, իրականում խոսք կարող է գնալ ընդամենը 9 տոկոսի մասին (և սա անգամ ադրբեջանական պաշտոնական վիճակագրության թվերով): Իսկ ճշմարտությունն այն է, որ այսօրվա դրությամբ հենց ադրբեջանցիներն են օկուպացված պահում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի 15 տոկոսը, դրան գումարած Ղարաբաղից դուրս գտնվող մի շարք խոշոր գյուղեր-անկլավներ, որոնցից բնակչությունը ամբողջովին տեղահանված է: Ի դեպ, ղարաբաղցիների կողմից «բռնազավթված» շրջանները չէ՞ որ ըստ էության նույնպես ղարաբաղյան հողեր են, և դրանք Ռուսաստանին միացնելու պահին մտնում էին Ղարաբաղյան խանության մեջ: Սկզբունքորեն Ղարաբաղը պատրաստ է հրաժարվել պատմականորեն իրեն պատկանող այդ շրջաններից՝ երաշխավորված խաղաղության դիմաց: Եվ փաստորեն, դրա համար էլ չի բնակեցնում և յուրացնում այդ հողերը:

Ժամանակ առ ժամանակ Բաքուն աղմուկ է բարձրացնում ռուս-հայկական ռազմական համագործակցության առիթով: Ով փորձում է ճախողել այդ համագործակցությունը, նպատակ է հետապնդում խփել Հայաստանի և Ռուսաստանի կենսական ազգային շահերին: Եվ հենց սա է թուրք-ադրբեջանական դաշինքի անթաքույց նպատակը, քանի որ ռուս-հայկական համագործակցությունը միակ արգելքն է ու պատնեշը՝ Անդրկովկասում ՆԱՏՕ-ի ծրագրերի իրականացման ճանապարհին:

Որպես ադրբեջանական կողմնորոշման բացահայտ գործակալներ, հանդես եկան գեներալներ Ռոդիոնովը և Ռոխլինը: Բաքվի պատվերով նրանք անարդոլական քաշքշուկ սկսեցին Հայաստանին հատկացված զենքի շուրջ: Մեծ եռանդով սրանց պրոպագանդիստական աջակցություն ցույց տվեցին «Մոսկովսկի կոմսոմոլեց», «Նովայա գազետա» թերթերը «Ազատրա» թերթի «հայրենասերների» հետ մի լծաքարշ կազմած, ռուսական մասսայական տեղեկատվության միջոցներում չգիտես որտեղից հայտնված, մինչ այդ անհայտ «գիտակներ» (որոնք կատարում էին Բաքվի և ինչ-որ ուժերի հանձնարարականները), միավորվեցին ու հարձակում սկսեցին ռուսական կառավարության վրա, մեղադրելով նրան այն բանում, որ իբր անօրինականորեն սպառազինություն է մատակարարում Հայաստանին: Նրանք թքած ունեին, թե հարցը առաջին հերթին վերաբերում է Հայաստանում ռուսական ռազմական հենակետի և սահմանապահ զորամասերի սպառազինության մակարդակի բարձրացմանը: Եվ ինչո՞ւ չէ՞ նաև օգնություն մեր դաշնակից Հայաստանին: Մի՞թե դա սուրբ գործ չէ: Իհ արդյոք, այդ դաշինքի ու մեր պաշտպանունակության խարխլումը, որին ձգտում է Ադրբեջանը մոսկովյան իր գաղտնի ու բացահայտ գործակալների օգնությամբ, նպատակային և ակնհայտ հարված չէ հենց Ռուսաստանի ազգային անվտանգությանը:

Այն ժամանակ այդ գրոհը ձախողվեց: Հայաստանում ռուսական ռազմական հենակետ ունենալու մասին ռուս-հայկական պայմանագրի վավերացումը ձախողելու ճիգերը տապալվեցին: Չհաջողվեց նաև տապալել Հայաստանի և Ռուսաստանի բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրի ստորագրումը: 1997-ի օգոստոսին Մոսկվայում այն ստորագրվեց: Այսօր Բաքվի ազդանշանով այդ արշավը նորից է սկսվել: Այս անգամ արդեն Հայաստանում հակաօդային պաշտպանության համակարգ ստեղծելու կապակցությամբ: 1992 թվականից ընկըճած Ադրբեջանի և Հայաստանի օդային ռազմական ուժերի հարաբերությունը կազմում էր 100-ը 0-ի դիմաց: Որոշ ժամանակ անց, հայերն ունեցան 6—7 ռազմական հինգաթիռ, իսկ ադրբեջանցիները Ղարաբաղում կորցրին մոտ երկու տասնյակ հինգաթիռ: Եվ, այնուամենայնիվ, անհուլի գերակշռությունը ակնհայտ էր: Անձամբ ես, բազմիցս Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության առջև բարձրացրել եմ այդ հարցը: Իմ առաջարկը ըմբռնումով ընդունվեց նաև այդ ժամանակվա նախարար Գրաչովի կողմից: Վերջապես Հայաստանում տեղավորված ռուսական զորքերի սպառազինության մեջ հայտնվեց կործանիչների առաջին էսկադրիլիան, և ռուսական ՄԻԳ-երը սկսեցին Հայաստանի օդային տարածքը պաշտպանել ադրբեջանա-թուրքական հնքնաթիռներից, որոնք անպատիժ խախտում էին սահմանը: Աստված հինքը հուշեց Ռուսաստանին՝ Հայաստանում հակաօդային պաշտպանության զենիթա-հրթիռային S—300 համակարգը տեղակայելու գաղափարը: Այս փաստը պարզապես խելագարեցրեց Բաքվի պանթյուրքիստներին և սկսվեց բողոքի ու մեղադրանքների նոր վայնասուն: Ադրբեջանին, նրա ավազ եղբորն ու ՆԱՏՕ-ի ներկաց տերերին ամենևին դուր չէր գալիս ռուս-հայկական ռազմական համագործակցությունը և ռուսական ներկայության ուժեղացումը Անդրկովկասում:

Ալիևը համոզված է, որ ՆԱՏՕ-ն Անդրկովկասում իրականացնելով իր և արևմտյան երկրների երկրաքաղաքական և տնտեսական ծրագրերը, միաժամանակ կլուծի իր այսինքն՝ Ադրբեջանի պրոբլեմները: Անդրադառնալով Բաքու—Ջեյհան նավթատարի շինարարությանը, թուրքական «Հուրիեթը» գրում է, որ «մեծ խողովակը պետք է առաջին հերթին պաշտպանել ռուսական ռազմական համագործակցությունից՝ ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Թուրքիայի տարածքում: Օրերս, Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիևը Թբիլիսիում քննարկեց ՆԱՏՕ-ի հովանու ներքո Վրաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի և Մոլդովայի նավթամուղը պաշտպանող խաղաղարար գումարտակի ստեղծման հարցը: Կարելի է չկասկածել, որ եթե նրանք սկսեն իրականացնել իրենց ծրագիրը, ապա այդ ուժերը կծառայեն ոչ թե միֆական նավթամուղի պաշտպանությանը, այլ երկրատարածքային ավելի լուրջ նպատակների:

...Այսօր մեզ անհրաժեշտ է լուրջ հետևություններ անել անցյալի սխալներից և հաշվի առնելով ՆԱՏՕ-ի ծավալապաշտական նկրտումները Անդրկովկասում, դիմագրավել և հաստատում ու հավատք հակաճարված տալ դրանց:

Ռուսաստանը այսօր արտաքին առումով ավելի քան երբևէ իր շահերից ելնելով, հետևողականորեն զորավիգ լինել Անդրկովկասում իր միակ և հուսալի, միշտ ապահովված դաշնակցին՝ Հայաստանին: Նրանք թքած ունեն, թե ինչ կասեն Բաքուն և Անկարան, Թբիլիսին և Վաշինգտոնը, Բրյուսելն ու Ստրասբուրգը, Ռուսաստանի հետ ռազմական համագործակցությունը ոչ միայն ռազմավարական, այլև տնտեսական ու քաղաքական հզոր լծակ է Անդրկովկասում: Ռուսաստանի ներկայությունը Անդրկովկասում ոչ միայն ապահովում է տարածաշրջանի անվտանգությունը, այլև կանխում է ռազմական նոր հրկիզումները, որոնք անխուսափելիորեն կբռնկվեն, եթե Ռուսաստանը հեռանա տարածաշրջանից:

Ժամանակն է, որ Հայաստանն էլ մեր մասնագիտական տեղեկատվության միջոցները, որոնք երբեմն անտեղյակ, հանուն էլ գիտակցաբար, կատարելով ինչ-որ ուժերի պատվերները (հանուն ի, ռուսները ապօրինի ճանապարհով զենք են ուղարկել Հայաստան) ռուսական կառավարությանը մեղադրանքների մեր դաշնակցության մասին, Ադրբեջանի, Թուրքիայի դեմ ուղղված ամեն մի քայլի համար, կատարելով իրենց ուղղակի պարտականությունը՝ ներկայացնել ռուսական տեսակետը, ռուսական պատկերացումները տարածաշրջանային զարգացումների մասին, ռուսական ազգային շահերի մասին: Եվ այդ ամենը հնարավոր է դարձնել միայն ժամանակին Ադրբեջանին հրահրելով, որ ռուսական ռազմական ներկայությունը Անդրկովկասում ոչ միայն անհրաժեշտ է, այլև ցանկալի:

Միջին դարերում Արևմուտքը, խաչակրաց իր տարվանքներով, կործանեց Բյուզանդիան և որիշ երկրներ որ ճանապարհ բացեց թուրքական քաղաքագետներ:

Բնական ցեոլիտներ

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

Իոնափոխանակիչ, նդսորբցիոն և այլ օգտակար հատկություններից, ինչպես նաև թունաճարույց հատկությունների բացակայությունից ելնելով, արտասահմանյան առաջավոր երկրներում քնական ցեոլիտները, վաղուց ի վեր, բավականին մեծ արդյունավետությամբ, կիրառվում են բժշկության մեջ՝ ամենատարբեր տեսակի՝ մաշկային հից սկսած մինչև ներքին օրգանների, հիվանդությունների բուժման նպատակներով: Այս հանգամանքներն էլ խթան հանդիսացան Ռուսաստանում գիտահետազոտական աշխատանքներ սկսելու՝ ցեոլիտները, որպես դեղամիջոցներ օգտագործելու համար:

Ռուսաստանի Բժշկական ակադեմիայի Սիբիրյան բաժանմունքի կենսաքիմիայի ինստիտուտում մշակված «Ծեոսորբ» դեղամիջոցը բավարարում է հետևյալ պահանջներին.

— արգելակել ռադիոնուկլիդների թափանցմանը ներքին օրգաններ,

— բարձրացնել օրգանիզմի կպչունությունը իոնացնող ռադիացիայի հանդեպ,

— նպաստել ռադիոնուկլիդների արագ դուրս բերմանը օրգանիզմից:

Կամավոր փորձարկման ենթարկվելու ցանկություն հայտնած հիվանդների վրա դեղամիջոցի կիրառումը՝ օրգանիզմ թափանցած ռադիոնուկլիդների արագ դուրս բերման գործում՝ մեզի և կղկղանքի հետ, տվել է շատ լավ արդյունք: Նույն փորձարկումները կենդանիների վրա հաստատել են «Ծեոսորբի» մեծ ակտիվությունը:

Վ. Ֆ. Ավխիմենովի տվյալներով՝ «Լիտովիտ» պատրաստուկը փորձարկվել է քորվող դերմատոզով հիվանդ երեխաների վրա՝ Աչինսկ քաղաքի մաշկա-վեներական դիսպանսերում: Փորձարկման են ենթարկվել 8 մարդ, որոնցից 4-ը հիվանդ են եղել դերմատիտով, 4-ը՝ նեյրոդերմատիտով, որոնցից 2-ը ունեցել են նաև էկզեմա: Փորձարկումների հետևանքով բժիշկները հանգել են հետևյալ եզրակացության.

1) դերմատիտով հիվանդ երեխաների մոտ քորի զգացողության նվազումը՝ ստուգարքի համեմատ, հանվել է 3 օր շուտ: Հիվանդության նվազման ընթացքի ժամանակահատվածը կրճատվել է 3—4 օրով,

2) նեյրոդերմատիտի և էկզեմայի դեպքում քորը հանվել է 3—4 օր ավելի վաղ, քան ստուգարքի ենթակա հիվանդների մոտ: Հիվանդության նվազման ընթացքի ժամանակահատվածը կրճատվել է նույնպես 3—4 օրով:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Նովոսիբիրսկի բժիշկներին և ցեոլիտային պատրաստուկներ ու դեղամիջոցներ ստեղծող մասնագետներին արդեն իսկ հաջողվել է բուժել 30-ից ավելի հիվանդություններ, որոնց ուղղությամբ կատարվող աշխատանքների զարգացումն ու կատարելագործումը շարունակվում է և, հավանաբար, կշարունակվի այսուհետև: Սակայն, այս բոլորով հանդերձ, ցեոլիտները, որոնցով շատ հարուստ է Հայաստանը, իրենց արժանի ուշադրությանը՝ դեռևս չեն արժանացել. ոչ գյուղատնտեսության, և, ոչ էլ արդյունաբերության ու բժշկության մեջ:

Ասվածից ելնելով, կոչ եմ անում Հայաստանի կառավարությանը, համապատասխան ճյուղերի մասնագետներին ու ճյուղերով շահագրգռված գործարար մարդկանց՝ աչքաթող մի արեք Հայաստանի բնական ցեոլիտները, դրանք բնության «հրաշք քարերից»» են, 21-րդ դարի ամենակարևոր օգտակար հանածոներից:

Հրաչիկ ԱՎԱԳՅԱՆ
Երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր



Հիվանդասենյակում:

Հրեշ, որ լափում է մարդու աուրան

Եթե հավատանք զանազան գրքացների, կախարդների, պայծառատեսների և էքստրասենսների պնդումներին, տպավորություն է ստացվում, թե գլխավոր վտանգը, որ սպառնում է մեր աուրային, էլի չար աչքն է կամ անեծքը: Այսինքը, մեկ ուրիշից մարդում հաստիճագրված բացասական ազդեցությունը:

Սակայն այսօր ավելի ու ավելի տագնապալից ու բարձր են հնչում փորձագետների ձայները, որոնք նախազգուշացնում են, որ մարդու կենսաէներգետիկ առողջությանը ավելի աճավոր են սպառնում ակտիվ ճառագայթում ունեցող անշունչ առարկաները: Խոսքը վերաբերում է էլեկտրոնային տարբեր սարքերին: Ինչո՞ւ է ավելի վտանգավոր: Հենց թեկուզ նրա համար, որ առ այսօր ամենևին պարզ չէ, թե ինչ կերպ կարելի է պայքարել այդ վտանգի դեմ:

«Չար աչքից», «թուղթ ու գրից» կամ ինչ-որ «կախարդից» աուրային հասցված խեղումների բուժման միջոցները մարդը գտել է հազարամյակների ընթացքում, հղկել է դրանք ու կատարելագործել: Այդ գինանոցը հարուստ է՝ ըսկըսած բուսականից մինչև կենսաէներգետիկ ներգործությունը, որ էքստրասենսները իրագործում են ձեռքերի ափերի և աչքերի օգնությամբ:

Էկոլոգիայում վերջերս ի հայտ է եկել նոր հասկացություն՝ (էլեկտրամագնիսական գերաղտոտվածություն» (սմոգ): Դա նշանակում է, որ մենք, առանց իսկ զգալու, բառացիորեն ընկղմվում ենք էլեկտրամագնիսական ուրիշ դաշտի մեջ, որ ստեղծում են ուժային հաղորդալարերը, հեռուստացույցները, համակարգիչները, սառնարանները, փեյջերները, բջջային հեռախոսները: Իսկ աուրան, որ կենսաֆիզիկոսները համարում են մարդու օրգանիզմի փսիխոէներգետիկ և կենսատեղեկատվական «կմախքը», նույնպես ունի ալիքային և ռեզոնանսային բնույթ: Եվ լինելով կենդանի ալիքների կծիկ, աուրան փոխհարաբերվում է մետ